



**«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ**

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեոնազործների 18, հեռ. (+374 285) 3 31 31, էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

ԷԱԿԱՆ ՓԱՍՏԵՐ ԵՎ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՍՈՒԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, ք. Քաջարան, 3309, Լեոնազործների 18,

Հեռ. (+374 285) 3 31 31,

Էլ. փոստի հասցե՝ info@zcmc.am

Հաշվետվություն թիվ 21, 07.09.2021թ.

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ նաև Ընկերություն կամ ԶՊՄԿ) 12,4999% բաժնետոմասերի սեփականատեր «Զանգեզուր Մայնինգ» ՍՊ ընկերության պահանջով՝ «ԶՊՄԿ» ՓԲ ընկերության խորհուրդի կողմից 2021 թվականի օգոստոսի 16-ին ընդունվել է որոշում՝ 2021 թվականի սեպտեմբերի 15-ին Ընկերության բաժնետերերի արտահերթ ընդնահուր ժողով գումարելու մասին՝ հետևյալ օրակարգով.

- 1) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կողմից «ՔՐՈՆԻՄԵՏ Մայնինգ» բաժնետիրական ընկերությունից և «Մաքուր Երկաթի գործարան» բաց բաժնետիրական ընկերությունից ձեռք բերած 2,061,253 (երկու միլիոն վաթսուներեկ հազար երկու հարյուր հիսուներեք) հատ հասարակ անվանական բաժնետոմսերը (յուրաքանչյուրը 20,000 (քսան հազար) ՀՀ դրամ անվանական արժեքով) մարելու (բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու և կանոնադրական կապիտալն անփոփոխ թողնելու) հարց.
- 2) «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ կանոնադրության 15-րդ կետը փոփոխելու և կանոնադրության փոփոխությունը հաստատելու հարց: